

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2001 թվականի N 722

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԶԵՆՔԻ, ԴՐԱՆՑ ՓԱՍՓՈՒՇՏՆԵՐԻ ՈՒ ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» N 673 որոշման 14-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում մարտական և այլ զենքի, դրանց փամփուշտների ու ռազմամթերքի շրջանառության կարգը (կցվում է):

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

*Հաստատված է*

*ՀՀ կառավարության 2001 թվականի  
օգոստոսի 9-ի N 722 որոշմամբ*

## Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԶԵՆՔԻ, ԴՐԱՆՑ ՓԱՍՓՈՒՇՏՆԵՐԻ ՈՒ ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում (այսուհետև՝ պետական ռազմականացված կազմակերպություն) ձեռքի մարտական հրաձգային և այլ զենքի, դրանց փամփուշտների ու ռազմամթերքի, ինչպես նաև մարտական սառը զենքի (այսուհետև՝ զենք) շրջանառությունը՝ ներառյալ արտադրությունը, վաճառքը, փոխանցելը, ձեռք բերելը, հավաքածուներ կազմելը, ցուցադրելը, հաշվառելը, պահելը, կրելը, տեղափոխելը, փոխադրելը, օգտագործելը, վերցնելը, ոչնչացնելը, Հայաստանի Հանրապետության տարածք ներկրելը և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելը:

#### II. ԶԵՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Պետական ռազմականացված կազմակերպությունները կարող են իրականացնել զենքի արտադրություն:

3. Պետական ռազմականացված կազմակերպությունները պարտավոր են ապահովել զենքի արտադրության լիակատար անվտանգությունը, արտադրության ընթացքի նկատմամբ վերահսկողությունը, արտադրանքի համապատասխան որակը և դրա պահպանությունը:

4. Նորոգվող զենքի յուրաքանչյուր միավոր ենթակա է փորձարկման:

### **III. ՁԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԸ, ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ**

5. Պետական ռազմականացված կազմակերպություններն իրավունք ունեն՝

ա) զենքը վաճառելու կամ փոխանցելու այլ պետական ռազմականացված կազմակերպությունների, ինչպես նաև այն իրավաբանական անձանց, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զբաղվում են զենքի արտադրությամբ կամ առևտրով.

բ) առանց լիցենզիայի ձեռք բերելու մարտական և կադաստրում գրանցված ցանկացած զենք՝ այն իրավաբանական անձանցից, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զբաղվում են զենքի արտադրությամբ կամ առևտրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող զենք:

Ձենքի փոխանցումը, վաճառքը և ձեռքբերումը պետք է ձևակերպվեն սահմանված ձևի փաստաթղթերով, որոնց ցանկը, ձևը և վարման կարգը սահմանվում են համապատասխան պետական ռազմականացված կազմակերպության գերատեսչական նորմատիվ ակտերով (Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի սուրհանդակային ծառայության վարչությունում մարտական և այլ զենքի, դրանց փամփուշտների ու ռազմամթերքի շրջանառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) գերատեսչական նորմատիվ ակտերով):

**(5-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

6. Պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարներն իրավունք ունեն կարճափող հրազենը՝ 2 պահուսակի կամ թմբուկի տարողությամբ, փամփուշտներով պահելու և կրելու նպատակով փոխանցելու որոշակի կարգի զինծառայողներին և կենսաթոշակի անցած՝ պետական ռազմականացված կազմակերպությունների աշխատողներին:

Փոխանցված զենքը և ռազմամթերքը ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ իր սահմանած կարգով:

Բնակության վայրի փոփոխության դեպքում նշված անձինք 10-օրյա ժամկետում պետք է ներկայանան զենքի գրանցման Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության սահմանած կարգով զենքը վերագրանցելու համար:

**(6-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն իրավունք ունի հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց ժամանակավորապես մարտական զենք փոխանցելու՝ կանոնադրական խնդիրները լուծելու համար:

Ձենքը համապատասխան իրավաբանական անձանց տրամադրվում է նրանց ղեկավարի (ղեկավար մարմնի) կողմից դիմում և համապատասխան փաստաթղթեր ներկայացվելուց հետո, որոնց ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից:

**(7-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

8. Պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարներն իրավունք ունեն կարճափող հրազենը սահմանված կարգով պահելու և կրելու նպատակով ժամանակավորապես հատկացնելու պետական մարմինների պաշտոնատար անձանց՝ ձևակերպելով համապատասխան թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության սահմանած կարգով:

**(8-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

9. Պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարներն իրավունք ունեն զենքով պարզևատրելու զինծառայողներին և պետական ռազմականացված կազմակերպությունների աշխատողներին: Ձենքով պարզևատրումը ձևակերպվում է պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարի հրամանով:

10. Պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինությունում գտնվող ակոսափող հրազենից իրականացվում է նախնական ստուգողական կրակոց՝ արդյունքները հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնելու նպատակով:

Պետական ռազմականացված կազմակերպությունների կողմից զենք ձեռք է բերվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական ստուգողական կրակոց իրականացնելուց հետո: Առանց նախնական ստուգողական կրակոց իրականացնելու թույլատրվում է զենք ձեռք բերել միայն այլ պետական ռազմականացված կազմակերպություններից:

Զենքից նախնական ստուգողական կրակոցներն իրականացվում են նաև մասնագիտացված ձեռնարկություններում կապիտալ վերանորոգումից հետո:

Պետական ռազմականացված կազմակերպությունների ղեկավարների որոշմամբ ստուգողական կրակոցները կարող են իրականացվել զենքի շրջանառության այլ փուլերի ընթացքում:

Զենքից նախնական ստուգողական կրակոցներ իրականացնելու տեխնիկական պահանջները, դրանց փաստաթղթավորումը, հաշվառելու, պահելու և գնդակների ու պարկուճների հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան փոխանցելու կանոնները, ինչպես նաև օգտագործված գնդակների և պարկուճների դուրսգրման ու ոչնչացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ համաձայնեցնելով մյուս պետական ռազմականացված կազմակերպությունների հետ:

*(10-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)*

#### **IV. ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔԱՄՈՒՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՑՈՒՑԱԴՐԵԼԸ**

11. Պետական ռազմականացված կազմակերպությունների թանգարանները, փորձագիտական և հատուկ այդ նպատակներով ստեղծված հիմնարկներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից սահմանված կարգով լիցենզիա ստանալուց հետո կազմելու և ցուցադրելու զենքի հավաքածուներ:

Պետական ռազմականացված կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն հավաքածուներ կազմելու և ցուցադրելու համար փոխանցելու (վաճառելու) այն զենքը, որի մասին տեղեկությունները չեն կազմում պետական գաղտնիք:

*(11-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)*

12. Զենք կարող է պետական ռազմականացված կազմակերպությունների թանգարաններ, փորձագիտական և հատուկ այդ նպատակով ստեղծված հիմնարկներ փոխանցվել՝ առանց մալելու կամ ուսումնական վիճակի բերելու, իսկ հավաքածուներ կազմելու և ցուցադրելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և քաղաքացիներին, որպես կանոն՝ մալած կամ ուսումնական վիճակի բերված:

#### **V. ԶԵՆՔ ՀԱՇՎԱՌԵԼԸ, ՊԱՀԵԼԸ ԵՎ ԿՐԵԼԸ**

13. Պետական ռազմականացված կազմակերպությունները պարտավոր են իրականացնել զենքի հաշվառում՝ համապատասխան նմուշի փաստաթղթեր վարելու միջոցով:

14. Պետական ռազմականացված կազմակերպություններում զենք պահելն իրականացվում է միայն այդ նպատակի համար հատուկ նախատեսված տարածքներում, որոնք ապահովում են զենքի պահպանության անվտանգությունը և բացառում կողմնակի անձանց չարտոնված մուտքը: Զենքը պահելու համար տարածքները սարքավորվում են պահպանության և հրշեջ անվտանգության տեխնիկական միջոցներով:

Ըստ զենքի նշանակության, դրանք պահելու պահանջները որոշվում են պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով:

Պետական ռազմականացված կազմակերպությունների զինծառայողները, ներառյալ կենսաթոշակի անցած աշխատողները, ովքեր սահմանված կարգով զենք են ստացել, պարտավոր են ապահովել դա պահելու անհրաժեշտ պայմանների կատարումը: Պետական ռազմականացված

կազմակերպությունների կենսաթոշակի անցած աշխատողների բնակության վայրի Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններն իրավունք ունեն ստուգելու գրանցված զենքը պահելու պայմանները:

Որպես պարզև տրված կամ փոխանցված զենքի հափշտակման կամ կորստի դեպքում զինծառայողները և կենսաթոշակի անցած՝ պետական ռազմականացված կազմակերպությունների աշխատողները պարտավոր են դրա մասին անմիջապես հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններին:

**(14-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

15. Պետական ռազմականացված կազմակերպությունների զինծառայողները և աշխատողները պարտավոր են զենքի հափշտակման, կորստի, փչանալու կամ շարքից դուրս գալու բոլոր դեպքերի մասին զեկուցել իրենց անմիջական ղեկավարներին, որոնք իրենց հերթին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատախազություն զենքի հափշտակման կամ կորստի հանգամանքների մասին՝ նշելով յուրաքանչյուր միավոր զենքի մոդելը, տրամաչափը, սերիան, համարը, արտադրության տարեթիվը, կազմակերպում են հետաքննություն և միջոցներ են ձեռնարկում հափշտակված կամ կորած զենքը հայտնաբերելու համար:

**(15-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

16. Հափշտակված կամ կորած զենքը պետական ռազմականացված կազմակերպություններում հաշվառումից դուրս է գրվում պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից՝ հափշտակված կամ կորած զենքը հաշվառման վերցնելու մասին տեղեկանքն ստանալուց հետո:

Հափշտակված կամ կորած զենքի գորամաս կամ պետական ռազմականացված կազմակերպություն վերադարձման դեպքում դրա ղեկավարները պարտավոր են 3 օրվա ընթացքում դրա մասին զեկուցել իրենց անմիջական ղեկավարին և հայտնել այն պետական մարմիններին, որոնք իրազեկվել էին զենքի հափշտակման կամ կորստի մասին:

Հափշտակված կամ կորած զենքը գորամաս կամ պետական ռազմականացված կազմակերպություններ վերադարձնելու դեպքում այն վերագրանցվում է պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

**(16-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

17. Կարճափող հրազեն ունեցող պետական ռազմականացված կազմակերպությունների կենսաթոշակի անցած զինծառայողները և աշխատողները, զենքը պետական ռազմականացված կազմակերպություն վերադարձնելիս, պարտավոր են դրա մասին հայտնել համապատասխան Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններ և հանձնել զենքը պահելու ու կրելու թույլտվությունը:

Ժամանակավոր փոխանցված զենքը տնօրինողի մահվան դեպքում վերադարձվում է այն տված պետական ռազմականացված կազմակերպություն:

Զենքով պարզևատրվածի մահվան դեպքում՝

ա) որպես պարզև տրված կարճափող հրազենը, դրա պահելու և կրելու թույլտվությունը հանձնվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, որն իր հերթին զենքը վերադարձնում է ըստ պատկանելության՝ թանգարանների հավաքածուներում ներառելու կամ սահմանված կարգով ոչնչացնելու նպատակով:

բ) եթե որպես պարզև տրված կարճափող հրազենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներառված է եղել հավաքածուի մեջ, ապա այն ժառանգորդին է վերադարձվում, որպես կանոն, մալելուց հետո:

**(17-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)**

## **VI. ԶԵՆՔԸ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ ԵՎ ՓՈԽԱԴՐԵԼԸ**

18. Զենքի տեղափոխումը և փոխադրումն օդային, երկաթուղային, ավտոմոբիլային և տրանսպորտային այլ միջոցներով իրականացվում են զինված պահպանության ներքո՝

պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

19. Տեղափոխելու և փոխադրելու ժամանակ զենքը պետք է գտնվի պարպված վիճակում, ռազմամթերքից առանձնացված: Ձենքն ու ռազմամթերքը պետք է փաթեթավորվեն հատուկ տարայի մեջ, որը պետք է կնքվի կամ կապարակնքվի:

20. Ձենք տեղափոխող տրանսպորտային միջոցի բացված լինելու նշանների հայտնաբերման, տարայի վնասման, կնիքի կամ կապարակնիքի դրոշմվածքի խախտման դեպքում զինված պահպանության ղեկավարը պարտավոր է դրա մասին անմիջապես հայտնել երկաթուղային հատվածի կամ կայարանի ռազմական պարետին, կայարանի պետին, տրանսպորտային Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններին, կազմել ակտ, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կատարվածի պատճառները բացահայտելու համար և ապահովել դեպքի վայրի պահպանությունը:

*(20-րդ կետը փոփ. 31.07.03 N 991-Ն)*

## **VII. ՁԵՆՔԸ ՎԵՐՑՆԵԼԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ**

21. Զինձառայողներից և կենսաթոշակի անցած՝ պետական ռազմականացված կազմակերպությունների աշխատողներից զենքը կարող են վերցնել զենքի շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան կազմակերպությունների իրավասու ներկայացուցիչները՝ պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

22. Սպառազինությունից հանված, ինչպես նաև անպիտանիության բերված զենքը ենթակա է դուրսգրման՝ համապատասխան ակտի կազմմամբ: Ձենքի դուրսգրման մասին ակտը կազմվում է հանձնաժողովի կողմից, որի կազմը որոշվում է համաձայն պետական ռազմականացված կազմակերպությունների նորմատիվ ակտերի:

23. Դուրս գրված զենքը ենթակա է օգտահանման և ոչնչացման՝ պետական ռազմականացված կազմակերպությունների գերատեսչական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

## **VIII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՁԵՆՔ ԵՆԵՐԿՐԵԼԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼԸ**

24. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք զենք ներկրվում և Հայաստանի Հանրապետությունից արտահանվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպության հրավերի կամ օտարերկրյա ռազմականացված կազմակերպության հայտի հիման վրա:

25. Պայմանագրերով, հրավերով կամ հայտով օտարերկրյա ռազմականացված կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք զենք ներկրվելու դեպքում՝ հրավերը ձևակերպած, պայմանագիրն ստորագրած, հայտն ստացած Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության տարածք զենք ներկրելու թույլտվություն ստանալու համար առնվազն մեկ ամիս առաջ՝ սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նշելով զենքի ներկրման նպատակը, ժամկետները, ներկրվող զենքի և փամփուշտների տեսակն ու քանակը, զենքի պահման վայրը, ինչպես նաև զենքի ներկրման, տեղափոխման, փոխադրման ու պահպանման վերաբերյալ համապատասխան հանձնարարականներն իրավասու պետական կառավարման լիազորված մարմիններին:

26. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կամ նրա ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներկրվող զենքը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանի անցման կետում սահմանային մաքսային մարմնի և

Հայաստանի Հանրապետության իրավասու պետական ռազմականացված կազմակերպության ներկայացուցչի կողմից ենթարկվում է մաքսային գննության, որի մասին կազմվում է արձանագրություն և համարային հաշվառման ցուցակ՝ 5 օրինակից: Մեկը մնում է մաքսային մարմնում, մեկական օրինակ տրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և զենքը ներկրող օտարերկրյա ռազմականացված կազմակերպության ներկայացուցչին, որը հետագայում զենքն արտահանելիս այն ներկայացնում է մաքսային սահմանի անցումային կետ:

Եթե արտահանման ընթացքում արտահանվող զենքը չի համապատասխանում համարային հաշվառման ցուցակին, ապա զենքի ամբողջ խմբաքանակի արտահանումը կասեցվում է՝ մինչև արտահանող կողմի սպառիչ բացատրություններ և փաստաթղթեր ներկայացնելը:

27. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կամ նրա առանձին անդամների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում զենք պահելը, կրելը կամ օգտագործելն իրականացվում են Հայաստանի Հանրապետության իրավասու պետական ռազմականացված կազմակերպության թույլտվությամբ և հսկողությամբ: Հայաստանի Հանրապետություն ներկրված զենքը պահվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված իրավասու պետական ռազմականացված կազմակերպությունում:

28. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կողմից միջազգային պայմանագրով, հրավերով կամ հայտով ստանձնված պարտավորությունների խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված պատասխանատու կազմակերպությունը դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն խնդիրը դիվանագիտական ճանապարհով լուծելու համար:

29. Պայմանագրով, հրավերով կամ հայտով Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպությունների զինծառայողների կամ աշխատողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով զենքը Հայաստանի Հանրապետությունից արտահանվում և ներկրվում է գործողման վկայականի հիման վրա, որում նշվում են զենքի մոդելը, համարը և փամփուշտների թիվը: Գործողման վկայականը և դրա պատճենը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության սահմանային մաքսային մարմին, որտեղ պատճենը բնագրի հետ համեմատվելուց հետո վավերացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ համարային կնիքը դրոշմելու միջոցով, և կցվում է համապատասխան մաքսային հայտարարագրին:

30. Հայաստանի Հանրապետություն այցելող օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձանց ուղեկցող թիկնապահների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավորապես զենք ներկրվելու դեպքում, այցից առնվազն 3 օր առաջ, այցելող կողմը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն է ներկայացնում թիկնապահների կողմից ժամանակավոր ներկրվող զենքերի տեսակների, համարների և փամփուշտների տրամաչափի ու թվի մասին տեղեկատվություն: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից դրա մասին իրազեկվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի գրավոր թույլտվությամբ՝ նշված տեսակի և քանակի զենքերն ու փամփուշտները ներկրվում են մաքսային սահմանով:

Հայաստանի Հանրապետության տարածք զենք և փամփուշտներ ներկրելու թույլտվություն տալու կամ մերժելու վերաբերյալ ընդունված որոշման մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը գրավոր հայտնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

*(VIII-րդ բաժինը խմբ. 31.07.03 N 991-Ն)*